ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ԳՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/23» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Հ.Մարտունի
21.10.2024թ.

ժ. 10:00

Նիստին մասնակցել են հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյանը,անդամներ՝ Ս. Աբրոյանը, Վ.Թամոյանը, Կ. Դավթյանը, Թ.Դավթյանը

1. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
   Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի հետևյալ օրակարգը
   1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
   2. Ընտրված մասնակցի դիմումը ուսումնասիրելու մասին
   3.Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին որպես ընտրված մասնակից ճանաչելու մասին
   4. Պայմանագիր կնքելու որոշման մասին

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

2. «ԳՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/23» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի դիմումը ուսումնասիրելու մասին

- **«ԳՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/23»** ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչված ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԱԳՐՈՍԵՐՎԻՍ» ՓԲԸ-ին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, սույն թվականի հոկտեմբերի 11-ին Armeps համակարգի միջոցով և էլ. փոստի միջոցով ուղարկվել է ծանուցում, առաջարկելով կնքել պայմանագիր: ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԱԳՐՈՍԵՐՎԻՍ» ՓԲԸ-ի կողմից օրենքով սահմանված 5 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի նախագիծը կնքված և ստորագրված չի ներկայացվել Մարտունու համայնքապետարան, ինչպես նաև չեն ներկայացվել օրենքով սահմանված տուժանքի համաձայնագրերը:
- Մարտունու համայնքապետարանում 16.10.2024թ.-ին ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԱԳՐՈՍԵՐՎԻՍ» ՓԲԸ –ի կողմից ստացվել է գրություն , համայնքի ղեկավար Հ. Հովեյանի անունով, որտեղ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԱԳՐՈՍԵՐՎԻՍ» ՓԲԸ տնօրեն Վ. Հարությունյանը պարզաբանում է, թե ինչ պատճառով չի կնքվել պայմանագրի նախագիծը:

- Ուսումնասիրելով 16.10.2024թ.-ին ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԱԳՐՈՍԵՐՎԻՍ» ՓԲԸ –ի կողմից ստացված գրությունը, և հիմնվելով հրավերով սահմանված պահանջների վրա, պարզ է դառնում, որ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԱԳՐՈՍԵՐՎԻՍ» ՓԲԸ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, քանի որ պայմանագրի կնքման իրավասության վերջին աշխատանքային օրվա դրությամբ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԱԳՐՈՍԵՐՎԻՍ» ՓԲԸ-ն չի ունեցել համապատասխան ոլորտի գործունեություն իրականացնելու թույլտվություն/լիցենզիա/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

3 . Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին որպես ընտրված մասնակից ճանաչելու մասին

- Առաջնորդվելով «**ԳՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/23**» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.20 կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց, որ «**ԳՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/23**» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում **«Նոր Բար» ՍՊԸ-ն,** որպես հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

4. Պայմանագիր կնքելու որոշման մասին

- Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված մասնակցին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամներ _____ Ս. Աբրոյան

_____ Վ. Թամոյան

_____ Կ. Դավթյան

_____ Թ. Դավթյան

Քարտուղար՝ _____ Կարեն Սիմոնյան